ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ժողովը քննարկեց ՍՍՌՄ ԳԱ նախագահության հասարակական գիտությունների սեկցիայի 1964 թ. հունվարի 3—6-ի ընդլայնված նիստում ընդունված բանաձևը (տե՛ս «Տեղեկագիր», № 5)։ Զեկուցումով հանդես եկավ ԳԱ փիցե-պրեզիդենտի պաշտոնակատար, ակադեմիկոս Արտ. Կարինյանը։

— Ինչպես հայտնի է,—ասաց զեկուցողը,—ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հասարակական գիտությունների սեկցիայի ընդլայնված նիստում քննարկվել է ՍՍՌՄ ԳԱ ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևի և թղթակից-անդամ Յու. Պ. Ֆրանցևի «Պատմության մեթոդոլոգիական հարցերի մասին» զեկուցումը, որտեղ նշված է, որ պատմության զարգացմանը նոր թափ հաղորդելու համար անհրաժեշտ է վերջնականապես լիկվիդացնել Ստալինի անձի պաշտամունքի հետևանքները հասարակական գիտությունների բնագավառում։ Վերջին տասը տարում մեծ աշխատանք է կատարվել պատմագիտության բնագավառում լենինյան սկզբունքների վերականգնման ուղղությամբ։

Այնուհետև ակադեմիկոս Արտ. Կարինյանը իր զեկուցման մեջ կանգ է առնում այն խնդիրների վրա, որոնք դրված են հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնականների առջև։ Մեթոդոլոգիական-տեսական հարցերի պարզաբանմանը նպաստելու համար նա առաջարկում է հրավիրել տեսական ժողովներ նվիրված համաշխարհային պատմության, համաշխարհային արվեստի, ռուսական արվեստի, ՍՄԿՊ, Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ և ռուսերեն լեզվով տպագրված այլ գիտական մոնումենտալ աշխատությունների քննարկմանը։ Բացի դրանից այդ նույն ձևով կարելի է քննարկել նաև սովետահայ գիտնականների ջանքերով պատրաստված և տպագրված ուսումնասիրությունները։ Նման տեսական ժողովները հնարավորություն կտան բարձրացնել հասարակական գիտությունների հեղինակությունը, ստեղծել առողջ մթնոլորտ գիտական հիմնարկների կոլեկտիվներում, ստեղծագործական ուղղություն հաղորդել անգամ սուր բախումներ ունեցող դիսկուսիոն հավաքույթներին։

Զեկուցումից հետո ելույթներ ունեցան ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ Հ. Ասլանյանը, պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Գ. Սարգսյանը, պատմական գիտությունների դոկտոր Սարգիսովը, պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Գ. Գալոյանը։

— Գիտության մեթոդոլոգիական հարցերի մշակումը,—իր ելույթում ասաց Հ. Ասլանյանը,—մեր տեսական, գաղափարական բնագավառի հրատապ խնդիրներից է։ Բուրժուական մեթոդոլոգիայի քննադատության, բնագիտության և հասարակագիտության նկատմամբ մարքսիստական մեթոդոլոգիան կիրառելու սկզբունքները ձևակերպված են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններում։ Մեթոդոլոգիայի մշակումը անխզելիորեն կապված է կոնկրետ գիտությունների զարգացման տարբեր էտապների հետ։ XX դարը գիտության աննախընթաց վերելքի դարաշրջան է, որը պահանջում է միակ գիտական մեթոդոլոգիայի՝ մարքսիստական դիալեկտիկայի որոշ հարցերի բազմակողմանի վերհանում։

Այդ առումով,—նշեց Հ. Ասլանյանը,—փիլիսոփայության և իրավունքի սեկտորի խնդիրն է՝ ա) ԳԱ բնագիտական հիմնարկների գիտխորհուրդների հետ կազմակերպել համատեղ գիտական նիստ՝ նվիրված բնական գիտությունների մեթոդոլոգիական հարցերին, բ) Հասարակական գիտության մեթոդոլոգիայի հարցեր քննարկելու համար հրավիրել սեկտորի գիտխորհրդի հատուկ նիստ, գ) Պատմության մեթոդոլոգիայի պրոբլեմները քննարկելու նպատակով պատմության ինստիտուտի գիտխորհրդի հետ միասին հրավիրել համատեղ գիտական նիստ։

Պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Գ. Սարգսյանը իր ելույթում նշեց, որ «Вопросы истории» *ամսագրում հրապարակված զեկուցման մեջ բազմաթիվ կարևորագույն*

հարցեր են հարուցված, որոնք գրեթե բոլորն էլ կապված են սովետական պատմագրության մեջ լենինյան նորմերի վերականգնման, պատմաբանների կոչումը իր բարձրության վրա դնելու հետ։

— Մարքսիստ պատմաբաններից պահանջվում է,—ասաց Գ. Սարգսյանը,—ոչ միայն ամենայն ճշգրտությամբ շարադրել ու ներկայացնել հավաքած փաստերը, այլև իմաստավորել դրանք, գնահատական տալ պատմական դեպքերին ու երևույթներին, ցույց տալ նրանց դերը, հետևանքները, վեր հանել պատմական օրինաչափությունները և տվյալ ժամանակին հատուկ նրանց դրսևորումները։ Մեզ համար գործնական նշանակություն ունեն այս տեսական հարցերը, որոնք անհրաժեշտ են հաշվի առնել գիտական աշխատանքը պլանավորելիս։ Պետք է պլանավորել խոշոր, ակտուալ պրոբլեմային թեմաների մշակում և ապա դրանց համապատասխան ստորադասել գիտական աշխատակիցներին և ոչ թե ընդհակառակը, ինչպես հաճախ է կատարվում։

Այնուհետև ընկ. Սարգսյանը նշում է, որ տեսական խնդիրներ լուծելու համար հսկայական նյութ է տալիս հայ ժողովրդի երեքհազարամյա պատմությունը։ Այս տեսակետից ուրախալի է, որ մեթոդոլոգիական հարցերի մի մասը մեր պատմության ինստիտուտում հարուցվել է «Вопросы истории»-ում հրապարակված զեկուցումից առաջ և նրանից անկախ «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի շարադրման կապակցությամբ։

Ժողովում ինչպես զեկուցողը, նյույթ ունեցողները, այնպես էլ բոլոր մասնակիցները հավանություն տալով ՍՍՌՄ ԳԱ նախագահության հասարակական գիտությունների սեկցիայի 1964 թ. հունվարի 3—6-ի ընդլայնված նիստի բանաձևին, կոնկրետ առաջարկություններ արեցին պատմության մեթոդոլոգիական հարցերը իր պատշաճ բարձրության վրա դնելու համար։